

598.1

q-13

598.1

9-13

20 JUL 2010



598.1
Q. - 13

Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՄՈՂԵՍՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Կենդանաբանական գրույցներ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ЗЕРТЧУЎ—1927

[illegible]

Գրառեպլար № 22-բ հ. 488 Տիրաժ 3000
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—159

ՄՈՂԵՍՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

1. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՂԵՍ ԼԱՅԵՐՏԱ

Մեր քաղաքի շրջակայքն այնքան էլ հրապուրիչ չեր: Այնչ անտառներ կային, վոչ թռչուններ... յերևում էին բաց, բուսականությունից զուրկ աափաստաններ, մերկ, ժայռոտ բլուրներ: Ուրիշների համար իսկապես անհետաքրքրական էին այդ վայրերը, բայց մեզ, յերեք բնասերներին համար, այդ տեղերում զբոսնելն անարգյունավետ չեր: Յերեք բնասերներից մեկը յես էյի, յերկուսն էլ իմ մշտական փոքրիկ ոգնականները:

Ընթերցողը կմտածի անշուշտ, թե ի՞նչ հետաքրքրական բան կարող է լինել ամայի դաշտերում: Շատ և շատ բան—կասենք յերեքս էլ: Մենք մ'ը եքսկուրսիաների ժամանակ, տեսել ու հավաքել էյինք թե բզեզներ, թե դաշտամկներ, ճագարամկներ, ոձեր, մողեսներ:

Նկարագրեմ, թե ինչպես անցավ մեր մի եքսկուրսիան: Վճռել էյինք հատկապես մողես հավաքել: Ոգնականներս սովորականի նման բնագետի անհրաժեշտ զենքերով (բանկաներ, պայուսակ) զինված մտան սենյակս: Լուռ սպասում էյին, մինչև վոր յես էլ վերցնելի ինչ վոր հարկավոր էր:

Դուրս յեկանք դաշտը: Արևը սովորականից ավելի ուժեղ էր այրում, բայց մենք վարժվել էյինք տաքին, և թեթև էյինք հագնված:

Ճանապարհին պատահում էյին բզեզներ, մենք նրանց

վրա ուշադրութիւն չեյինք դարձնում. բոնեքներ շատ ունեյինք: Այդ որը վորոշել եյինք միայն մողեսներ բռնել:

Արդեն փորձված եյինք, գիտեյինք մողեսների սիրած տեղերը: Բարձրացնում եյինք հանդիպած քարերը, քարակույտներն ուսումնասիրում: Վերջապես մի քարի տակից դուրս սողաց մողեսն ու յերկար չմտածելով՝ ըսկսեց փախչել: Մենք վաղեցիքն ընդ յետևից: Ոգնականներս չխնայեցին իրենց հին գլխարկները. մեկը մյուսի յետևից գցում եյին մողեսի վրա: Փափուկ «կեպի» գլխարկով հեշտ եր նրանց բռնել, բայց այս անգամ, վորքան ել հետապնդեցինք մողեսին, մեր ջանքերն իզուր անցան, շատ շուտ կորցրինք մեր աչքերից. մեզ թվաց, թե նա հողի տակ մտավ. մենք զարմանքով իրար նայեցինք: Իսկապես իրավունք ունեյինք զարմանալու: Մեր շուրջը հարթ տափաստան եր. վոչ փոս եր յերևում, վոչ ել քարակույտ. ինչպէս և ուր անհայտացավ մողեսը — այժմ չեյինք կարողանում հասկանալ:

Սկսեցի փայտով քսել գետնին, չորացած, դեղնած վտիտ թփիկները ցնցել, խշխշացնել: Հանկարծ մի քանի քայլ մեզնից հեռու, հողի գույն ունեցող մի բան շարժվեց ու վազեց:

Մողեսն եր: Ընկանք նրա յետևից, ամեն կերպ աշխատելով աչքից բաց չթողնել: Հակառակ կողմերից հետապնդում եյինք նրան և աշխատում առաջը կտրել, հեռու պահել քարերից, հողի ճեղքվածներից:

Հին գլխարկս մի քանի անգամ սլացավ դեպի մողեսը, բայց անհաջող. մողեսն ազատվում եր: Հաճախ կորցնում եյինք նրան, նա կարծես ձուլված եր ավազի հետ. բայց յերեքուրս այնպես եյինք աղմկում, վոր մողեսն անհանգիստ՝ տեղից տեղ եր փախչում: Նրան փրկեց ելի մի բախտավոր դիպված: Մենք սկզբում չնկատեցինք. մողեսըն ավելի շուտ զգաց փրկարար ճեղքվածքը, նա անմիջապես մտավ խորը: Բայց այդ խորըն ինչպէս յերևում

ե այնքան ել խոր չեր և նեղ եր, ահա թե ինչու մողեսի պոչի ծայրը մնաց դուրսը, այնպես վոր կարելի չեր բռնել ու դուրս բաշել: Իհարկե ոգնականներս շատ ուրախացան. հավատացած եյին, վոր մողեսն արդեն մեր գերին ե: Յես մի կողմ անցա, դիտում եյի, ինչպէս Հալը զգուշութեամբ, վտեքերի ծայրերի վրա, ատամներն իրար սեղմած՝ մոտենում եր մողեսին. մատները մոտեցրեց մողեսի պոչին, բռնեց ու հազիվ լսելի ձայնով բացազանչեց:

— Բռնեցի, բռնեցի....

Յերկրորդ ոգնականս թեքված, ձեռքերն առաջ տարած՝ այնպիսի մի դրութեան մեջ եր, կարծես ինքն եր մողեսի պոչից բռնողը. նա ասաց.

— Քաշիր, մի անգամից բաշիր....

Յես ել շտապեցրի:

Հայկն սկսեց քաշել, նախ զգուշ, ապա՝ ուժգին:

— Բռնեցի, բռնեցի — աղաղակեց նա, բայց հանկարծ լուեց ու զարմանքով նայեց իր մատներին....

— Վայ — զարմացավ նա — այս ի՞նչ ե, պոչի ծայրն ե միայն....

Այո, Հայկի մատներում մողեսի պոչի ծայրն եր մնացել միայն: Մողեսը, զոհելով պոչի կտորը՝ ազատվել եր:

Ոգնականներս նայում եյին ինձ և սպասում իմ բացատրութիւններին: Ինչո՞ւ կտրվեց պոչը, հիմա ի՞նչ պիտի անի նա առանց պոչի:

— Լսեցեք, — ասացի յես, — մողեսն առանց պոչի չի մնա. նրա պոչն ելի կաճի և ելի առաջվա չափ կլինի: Մողեսին յերբեք պոչի ծայրից չալիտի բռնել. հենց վոր բռնեցիր, պոչը կտրվում ե ինքն իրեն և բռնողի ձեռքում մնում, այդ դուք տեսաք. և այդպիսով մողեսն ազատվում ե վտանգից. նա զրանից մեծ ցավ չի զգում: Վորոշ ժամանակից հետո պոչը նորից աճում ե: Բնութիւն

նը ոգնում ե մողեսին: Պոչի կտրվելու հատկությունը, լավ միջոց ե թշնամուց կյանքը փրկելու համար: Յերեւեկայենք մի բողե, վոր վոր և ե թուշուն բունի մողեսի պոչից, թուշունը քաշում ե պոչից, թուշունի բերանին պոչի ծայրն ե մնում, իսկ մողեսը ծլկվում ե:

Այդպես ուրեմն, մողեսին չկարողացանք բռնել: Նա մեզ հիշատակ թողեց իր պոչի կտորը: Մենք չհուսահատվեցինք: Ամենայն ուշադրությամբ հետադուրում ելինք հանդիպած քարակույտերը: Պատահեցինք մի ուրիշ մողեսի. բայց նա այնքան արագ վազեց, վոր չկարողացանք նույնիսկ իմանալ, թե վրը կողմ փախավ: Շատ դժվար եր նրան նկատել գետնի վրա, քանի վոր նրա գունը շատ նման եր հողի գույնին:

Վերջապես մեր նպատակին հասանք: Մի մեծ քար եր մեր առաջ, տափակ և փոքր ինչ խրված հողի մեջ. միասին քարը բարձրացրինք, յետ ձգեցինք: Ո՛ր... մեկի փոխարեն յերեքը դուրս ծլկվեցին ու փախուստի գլխեցին: Վազեցինք մեկի յետևից. գլխարկս ընկավ ուղիղ մողեսի վրա և պահեց նրան: Առաջ վազելով անմիջապես գլխարկս աջ ձեռքովս պահեցի: Ոգնականներս հաբձակողական գիրք ընդունեցին: Զգուշությամբ ձախ ձեռքս տարա գլխարկի տակ, հաջողվեց ափովս մողեսի մարմինը սեղմել: Բռնեցի: Ոգնականներս ուրախությունից սկսեցին աղաղակել և թուշկոտել շուրջս: Այդ վայրկյանին, մի անծանոթ կանգնել եր մի կողմ ու մեզ դիտում եր զարմանքով: Նա բան չասաց, հեռացավ յետ-յետ նայելով: Ո՛վ գիտե մտածում եր, թե ես ի՞նչ խենթեր ենք մենք:


Մեր միտքն ու ուշադրությունը մողեսի մասին եր: Մողեսը փորձում եր ազատվել, բայց ճիգերը գուր անցան. յես բռնել ելի նրան պարանոցից, և ամուր պահում ելի մատներովս:

— Բաց չթողնես—խնդրեց Հայկը:

— Ի՞նչ կա վոր—ասացի—յեթե փախչի, ելի կբռնենք:

— Ոհո, հեշտ և ասել՝ կբռնենք... մենք հո տեսանք, վոր նա շատ արագ ե վազում և նրան վոչ միայն վտառքերն են ոգնում, այլ և յերկար մարմինը, ոճի նման յերերող մարմինն ել ոգնում ե նրա վազքին, ուրեմն—այդ մեկ. իսկ յերկրորդն ել այն, վոր գույնն այնքան հողի, ավազի նման ե, վոր աննկատելի յե դառնում. յեթե հեռու փախավ, ել չենք նկատի...:

Ոգնականիս դիտողությունները շատ ճիշտ ելին:



Նկ. 1. Մովսրական մողես—Լացերտա աղիլիս

Մողեսը—սողուն կենդանի յե. իսկ սողուն են ասում նրա համար, վոր փորը քսվում ե գետնին (վտառքերը կարճ են), բայց վտառքերն արագավազ են, մարմինն ել գալարվում ե վազքի ժամանակ և զարմանալի յել չե, վոր մողեսներն արագավազ են:

Մենք, մարդիկս, հագիվ ենք հասնում նրա յետևից, հաճախ նա անհետանում ե մեր աչքերի առաջից, նույն-

իսկ բաց տեղերում. չեթե մենք այսպես դժվարանում ենք, ապա վորքան ավելի դժվար պիտի լինի նրա հետապնդումը մողեսի իսկական թշնամիների համար:

Բռնեցիներ մի մողես: Սովորական մողեսներից երևմբ վայրերում շատ տարածված, նրան անվանում են Լացերտա Ագիլիս:

Մեկեն ի մեկ մողեսը բերանը լայն բաց երանում և փորձում մատներս կծել. հաճախ հանում եր լեզուն, մարմինը կծկում, բայց շուտով հանգստացավ: Քարի տակ գտնվում եր մողեսի բունը. չորս կողմ թափթփված ելին միջատների մնացորդներ: Մողեսի սիրած կերակուրը— միջատներն են՝ բզեզներ, թիթեռներ, մորեխներ, ճպուռներ, ճանճեր... ուտում ե հաճույքով նաև սարգեր, բայց ամենասիրած անունդն ե մրջյունների թրթուռներն ու ձվիկները:

Շուտով նույն տեսակի մողեսից բռնեցինք ելի յերկու հատ:

2. Գ Ե Կ Կ Ո


Բայց ավելի մեծ յեղավ մեր ուրախությունը, չերբ մի փոսի մեջ, փխրուն ավազի միջից դուրս հանեցինք յերկու նոր տեսակի մողեսներ. սրանք նման չեյին սովորական մողեսին. մեկին տեղավորեցի բանկայում, իսկ մյուսը, ձեռքիս բռնած նկարագրում ելի: Այս մողեսին անվանում են Գեկկո (Նկ. 2): Նրա գույնը շատ երնման ավազի գույնին. չեթե նրանք չչարժվեյին, հազիվ թե մենք նկատեյինք: Ամբողջ մարմինը ծածկված եր յեռանկունաձև բշտիկներով. այդ յեռանկունի, կանոնավոր շարքերով դասավորված բշտիկները շատ եյին նմանում հողի վրա չեղած անհարթություններին: Յերբ համեմատելու համար հանեցի յերկրորդ մողեսը, նրա պոչը մեզ մի քիչ զարմացրեց. մարմինը բշտիկավոր եր, իսկ պոչը բոլորովին հարթ:

— Նոր պոչ ե աճել—բացատրեց ոգնականս:

Շատ ճիշտ եր ասում: Պոկված բշտիկավոր պոչի փոխարեն աճել եր նորը, բայց այս անգամ բոլորովին հարթ:

Այժմ մենք չեյինք կասկածում, վոր մողեսի պոչը նորից կարող ե աճել:

Գեկկոյի մարմինն ավելի լայն եր, գլուխը մեծ և մանավանդ մեր ուշադրությունը գրավեցին նրա խոշոր



Նկ. 2. Գեկկո—գիշերային մողես

աչքերը: Մենք հասկացանք, վոր Գեկկոն անպայման գիշերային մողես ե, քանի վոր սովորաբար գիշերային կենդանիների աչքերը խոշոր են լինում. մենք տեսել ենք բու, ճագարամուկ և հիշում եյինք նրանց խոշոր աչքերը: Գեկկոն ել գիշերային կենդանի չեր: Վորսի յետևից գիշերներն եր դուրս գալիս. խոշոր աչքերի շնորհիվ մթության մեջ լավ եր տեսնում:

Մողեսների համար տանը հատուկ բնակարան չինեցինք: Մի բարձրացիկը մեծ արկղ եր. նրա մեջ լցրի ավազ, մի քանի քար ել դրի, վոր յերբեմն մողեսները պահվեն քարերի տակ. մանավանդ Գեկկոն, վոր լույսն այնքան չեր սիրում:

Վաքսի ամանի խուփն ել ծառայում եր ջրամանի տեղ: Մողեսներին տեղավորեցինք իրենց բնակարանում, արկղը ծածկեցինք մետաղյա ցանցով: Յերբեմն արկղը բաց ելինք անում, թողնում, վոր մողեսները դուրս գան. հազիվ փորձում եյին մեզնից փախչել, բռնում և տեղավորում եյինք նախկին տեղը: Սկզբներում՝ կարծես իրար խոսք տվածի նման, մեզնից վոչ մի սնունդ չեյին վերջնում: Սովք հաշտեցրեց մեզ հետ. ամեն ուրնրանց կերակրում եյինք ճանճերով, մանրիկ բզեզներով. շատ եյին սիրում մրջյունների ձվիկներն ու թրթուռները: Լացերտան շուտ ընտելացավ. սա ագահ եր, հարձակվում եր պատահած ճանճի վրա: Իսկ մենք ճանճերը բռնում ու գցում եյինք արկղը: Պիտի տեսնեյիք, թե ինչ զգուշությամբ եր մողեսը մոտենում ճանճին: Նախ սողում ե դանդաղ՝ աչքերը ճանճին ուղղած, մոտենում ե, վորքան վոր հարկավոր ե, դունչն առաջ ցցում ու հանկարծ վրա հասնելով՝ ճանճին բերնով լափում: Լացերտաներից մեկը շատակեր եր: Մի որ նա միմյանց յետևից տասը ճանճ լափեց: Նա սովորեց նույնիսկ մատներիցս վերցնել ճանճը և լափել: Բռնած ճանճն այնքան ելի մոտեցնում մողեսին, վոր նա տեսնի ու զգա ճանճի ներկայութիւնը, ապա մատներս յետ եյի քաշում, լացերտան գալիս եր ճանճի յետևից և հենց վոր հասնում եր հարմար բոպեն՝ վրա յեր հասնում և ճանճին լափում:

Գեկկոներն, ընդհակառակը, խուսափում եյին մեզ հետ ծանոթանալուց, թաքնվում եյին մութ անկյուններում ու անշարժ մնում: Գիշերները սրանք ավելի աշխուժ եյին. սրանց յերբեմն դուրս եյինք բերում. նրանցից մեկը քիչ մնաց փախչելու մեզնից. զրինք սեղանի վրա և չորս կողմ նստած հսկում եյինք. նա վազեց մինչև պատը և հանկարծ սկսեց հարթ պատի վրայով դեպի վեր մագլցել. չեյինք հավատում, թե մինչև վերև կբարձրանար. Գեկկոն ազատ զգալով՝ արագ-արագ սողաց մինչև

առաստաղը. մի կերպ փայտով հաջողվեց նրա փախուստի առաջն առնել, յերբ մի ուրիշ պատով սկսեց իջնել—իսկույն բռնեցինք: Մեզ զարմացրեց նրա մագլցելու ընդունակութիւնը. սովորական մողեսը չի կարող գեկկոյի նման աւագ մագլցել: Գեկկոյի մատները յեղունկներն ավելի յեն սրածայր և դրանց շնորհիվ մողեսը լավ եր պահվում պատերի վրա:

Մողեսները մեզ հետ բարեկամացան. ընտելացան իրենց բնակարաններին, մեր տված սնունդից այլևս չեյին հրաժարվում:

Հուլիս ամիսն եր. մեկ որ մողեսների բնակարանում ավազի վրա նկատեցինք ինչ վոր սպիտակ գունդ, մի քիչ ջարդված եր նա. սպիտակ քար կարծելով՝ ուշադրութիւն չդարձրինք: Մի ուրիշ անգամ ցանցանման մի թեփուկ տեսանք. մողեսի շապկի կտորն եր այդ. լացերտաներից մեկը հողի մեջ եր թաղվել. հանեցինք և տեսանք, վոր մողեսի ժարմինը կարծես գզգզված եր, տեղ-տեղ մարմնի յեղջերամաշկը պոկվել եր:

Հասել եր շապկի փոխելու ժամանակը:

Շապիկ փոխելը—նշանակում ե, մարմնի վրայից հին յեղջերամաշկը հանել: Ոձերն ել ունեն այդ հատկութիւնը: Ոձերն իրենց հին մաշկն ամբողջովին հանում են, իսկ մողեսները մաս-մաս: Մողեսը շապկի կտորներն իր վրայից հանելու համար, անցնում ե քարերի արանքները, քարերին քավելով՝ պոկում ե իր վրայից մնացած յեղջեր մաշկը: Ամեն որ հավաքում եյինք շապկի կտորները:

Շատ չեր անցել, յերբ ելի մեր ուշադրութիւնը գրավեց ավազի մեջ կիսաթաղված մի սպիտակ դեղնավուն գունդ. ավազը մի կողմ հավաքելով՝ տեսանք ելի մի քանի, մաքուր, ճյուղնման, սպիտակ, սխեռաչափ դնդեր: Կասկած չկար այժմ, վոր դրանք մողեսի ածած ձվաններն

եյին: Ձուն շատ քնքուշ երևալով և բավական մեծ, համարյա մողեսի գլխի չափ: Ձվի կեղևն աչքան թափանցիկ էր, վոր նրա մեջ յերևում եյին սաղմի արյունատար մազանոթները: Յերբ ավազը լավ քրքրեցինք, գտանք նորից յերկու ձու, մեկը՝ ջարդված: Ձվաններից միայն յերկուսը թողինք մողեսներին, հույս ունենալով, վոր դրանցից դուրս կգան փոքրիկ մողեսներ: Իդուր եր մեր հույսը: Մյուս որը յերկու ձվաներն ել ճխլված ելին: Շատ հավանական է, մողեսներն եյին ջարդոտել արկղում վազվզելիս: Լավ է, վոր ելի նոր ձվաներ գտանք. այս անգամ ավելի զգուշ յեղանք. ձվաները տեղավորեցինք ուրիշ արկղի մեջ. արկղը տաք տեղ եյինք պահում, գիշերներն ել տեղափոխում եյինք այնպիսի տեղ, վոր տաքությունն անպակաս լինի: Մողեսների ձվերը թեև կյոր եյին, բայց կազմությամբ շատ նման եյին հավի ձվին: Կճեպը շատ բարակ էր, բայց դարձյալ կրային նյութից. ձվի մեջ սննդարար սպիտակուց երևալով: Բայց մողեսները ձու ածելուց հետո, այլևս չեյին հետաքրքրվում նրա վիճակով: Ձուն անխնամ է մնում, մողեսը տաքացնելու համար ձվաների վրա չի նստում: Մի քիչ թաղում է ավազի մեջ և այդպես թողնում: Ձուն արևի տաքության շնորհիվ իրեն իրեն զարգանում է:

Ամեն որ մենք հետևում եյինք ձվաներին: Սկզբում սպիտակ եյին ձվաները, ապա սկսեցին դեղնավուն դառնալ և ծանրացան: Աշխատում եյինք ձվաներն այնպիսի տեղերում պահել, վոր ցերեկվա տաքությունը 28° Ց. ավել կամ պակաս չլիներ, իսկ գիշերվա անհրաժեշտ ջերմությունը՝ 18° Ց.:

Մենք ազատել, բայց եյինք թողել մեր բոլոր մողեսներին, բացի յերկուսից. պահել եյինք գեկկոններին, վորովհետև սրանք հազվագյուտ մողեսներից եյին: Հինգ շաբաթ եր անցել, Յերկու մողեսները բախտ ունեցան իրենց մոտ տեսնելու յերկու յերիտասարդ մողեսներ: Յե-

րեսունութերորդ որն եր, ձվաները պատռվեցին և նրանց միջից դուրս յեկան յերկու մողեսներ. յերկուսն ել գեկկոններ եյին. առանց այն ել գեկկոնների դուրսը մեծ եր, ավելի մեծ եր յերկուսն մանավանդ նորածին գեկկոյի գլուխը: Մի բանի որ փորձեցինք մողեսներին կաթով կերակրել: Ձվաններից դուրս յեկած, նոր ծնված մողեսները հենց առաջին որվանից կարողանում եյին շարժվել: Յերկու մեծ մողեսներից վորն եր մայրը, չիմացանք: Իսկի մեկն ել չհետաքրքրվեց նորածին մողեսներով: Մեր տրված ճանճերից մի կտոր ել չտվեցին փոքրերին: Մայրական սիրո մասին գեկկոնները, ինչպես յերևում է, գաղափար չունեյին: Ոգնականներիցս մեկին այդ շատ զարմացրեց. նա մի դեպք պատմեց.

— Գուցե գեկկոնները չեն մտածում իրենց ձագերի մասին, բայց թե բոլոր մողեսներն ել այդպես են—չեմ կարող համաձայնվել: Մի անգամ ահա ինչ տեսա. քաղաքային այգում նստած եյի նստարանի վրա. հանկարծ ծառուղու վրա յերևաց մի փոքրիկ մողեսիկ, դուրս եր յեկել խոտերի միջից. թեև փոքր եր նա, բայց արագ եր սողում. լացերտա մողեսներից եր. մողեսիկը շատ եր մոտեցել նստարանիս, յես չուզեցի բռնել, ուզում եյի իմանալ, ո՞ւր պիտի գնա: Դիտողությունս յերկար չտևեց. հանկարծ յերևաց մի մեծ լացերտա, վազեց դեպի փոքրիկը և ի՜նչ... առավ նրան իր բերանը ու փախավ, կորավ կանաչների մեջ... նայեցի շուրջս՝ իմանալու համար մեծ մողեսի անհանգստության պատճառը—վոչինչ չտեսա...: Գուցե մողեսիկին մի այնպիսի վտանգ եր սպանում, վոր ինձ համար անհասկանալի յեր, բայց մոր համար (հավանական է, մայրն եր) զգալի յեր...:

Ոգնականիս պատմածը սխալ չեր... լինում են այդպիսի դեպքեր: Թեև սողուններն առհասարակ չեն խնամում սերունդը, ձվաներն ել չեն տաքացնում, բայց հազվագյուտ դեպքեր լինում են. որինակ, կան այնպիսի ի-

ժեր (թունավոր ոճ), վորոնք իրենց ածած ձվերը շրջապատում են, մարմինը կծկում ողակաձև և այդպիսով պաշտպանում, տաքացնում ձվաները: Իհարկե այդ անում են, առանց հասկանալու նրա նշանակութունը:

Մենք գեկկոնիկներին փորձեցինք մի քանի որ կաթով կերակրել. գոհ եյին կաթից, թե վոչ—դժվար եր ասել. լավ ուտում ելին մրջյունների ձվաները: Որեցոր մեծանում ելին: Շուտով մեծերի նման, նրանք ել սկսեցին ճանձերի յետևից ընկնել:

Բոլորս ել բավականաչափ ծանոթացել ելինք մողեսների հետ: Մտածեցինք ազատություն տալ նրանց: Բայց վորովհետև գեկկոն հազվագյուտ մողես եր, վորոշեցինք մեկին քնացնել եֆիրով, մեռցնել ու պահել ապակյա և նոթում՝ սպիրտի մեջ: Այդպես ել արինք: Մյուս յերեքին պիտի ազատեյինք: Հրաժեշտի որը հանդիսավոր անցավ: Հավաքվեցին նաև մեր բակի տղաները՝ ողնականներիս ընկերները, մեր տնեցիք: Սրկղը դրինք դեպի փողոց նայող բաց պատուհանի վրա: Հանեցի արկղի ցանցը: Մողեսներն իսկույն դուրս չեկան. մի քանի անգամ վազվեցին արկղում, յերբ հասան արկղի յեզրերին, սկսեցին դեպի վեր բարձրանալ, սողալով մի քիչ բարձրանում եյին վեր, նորից իջնում, կարծես գոյություն չունեցող ցանցը նրանց խանգարում եր: Ահա վերջապես դուրս յեկավ նրանցից մեկը, դրան հետևեց յերկրորդը... դուրս յեկողները պատուհանի վրա եյին, արևի ճառագայթների տակ... մի քիչ սպասեցին, կարծես մտածում ելին, թե վոր ուղղությամբ գնան, ապա դուրս վազեցին. գեկկոններէն ել մտադիր չեյին արկղում մնալ. նրանք ել դուրս յեկան, բայց վազեցին դեպի սենյակը: Գլուխներն ուղղելով դեպի փողոց՝ ցույց տվի նրանց իսկական ճանապարհը: Սրանք ել դուրս վազեցին: Մենք ել դուրս յեկանք փողոց. դիտում ելինք, ինչպես չորս մողես բարձր պատով դեպի վեր եյին սողում. ճանապարհ դրինք մինչև

կտուրը և յերբ վերջին մողեսն ել անհետացավ, մենք ցրվեցինք:

3. Ա Գ Ա Մ Ա

Բազմի, Տիխիսի և Յերեանի շրջականերում բնակվում ե մի մեծ մողես. նա սովորական մողեսներից չե: Առաջին անգամ նրան տեսանք Բազմի մոտ, Բիբի Հեյբաթ նավթահանքի բարձունքներում: Բիբի-Հեյբաթ հասնելու համար, նախ պիտի անցնենք Բաջիլով հրվանդանի մոտով: Սկզբում նավթահանքը չի յերևում, ճանապարհով բարձրանում ես և յերբ հասնում ես նրա ամենաբարձր կետը, հանկարծ քո առաջ բացվում ե մի մեծ մրոտ կաթսա—դա Բիբի Հեյբաթի նավթահանքն ե: Պիտի նավթահանքն ել անցնել, ապա գնալ դեպի բարձունքները՝ բարձրորոտ լեռնանման բլուրները: Բարձրացանք սարը, Բիբի Հեյբաթը մնաց ներքևում: Բարձունքների վրա լայնատարած հարթավայր եր: Այս ու այն կողմ հանդիպում ելին քարակույտեր, ժայռեր: Իմ մշտական ուղեկից՝ փոքրիկ բնասերները հանգիստ չեյին տալիս քարերին. ամեն մի տափակ մեծ քար բարձրացնում ու յետ եյին գլորում: Մեկ քարի տակից դուրս փախավ մի ոճանման, յերկար մողես. մեզ զարմացրեց նրա չափազանց աչքի ընկնող պայծառ կանաչա-կապտավուն գույնը. վազեցինք նրա յետևից. իսկապես ոճանման եր. իմացա, վոր դա Շումնցենս կոչված մողեսն եր. արդեն բռնել եյի նրան և յերեքս ել շատ եյինք ուրախացել հազվագյուտ, չափազանց կարճավոր մորսի համար, բայց հանկարծ ճշալով մողեսը ձեռնիցս բաց թողի. կծեց և փախավ: —Տեսա՞ր—ասացի—այս վառվռուն մողեսը պաշտպանության լավ միջոց ունի, այն ե՝ ուժեղ ատամներ. յեթե այդ չլիներ, յեթե մարմինն ել յերկար և ոճանման շարժուն չլիներ, նա միշտ թշնամիներին գոհ կգնար. պայծառ գույնը նրան չի

փրկի, ընդհակառակն, ավելի տեսանելի լի գարձնում նը-
րան:

Գեկկոն և լացերտան այդպիսի ուժեղ ատամներ չու-
նեյին, բայց նրանց փրկում էր մարմնի գույնը:

Թեև մողեսը փախավ, բայց գոնե իմացանք, վոր լի-
նում են նաև ոճանման յերկար մողեսներ:

Քարերի տակ հաճախ պատահում եյինք կարիճները: Սրանք ծայրին՝ թունավոր խալթոցով վերջացող նեղ փո-
րը վեր բարձրացրած, յերկու մկրատները տարածած՝ այս
ու այն կողմ վազվզելով պատրաստվում եյին թշնամուհ
հանդիպելու: Ժամանակ չեղավ յերկար նրանց դիտելու:
Քարերից մեկի տակից դուրս սողաց մի մեծ մողես, վա-
զեց և խսկույն անհայտացավ քարերի մեջ: Յես ուշադ-
րությամբ դիտեցի նրա փախուստի ճանապարհը: Զգու-
շությամբ առաջ գնացի: Շուտով նկատեցի նրան մի
կապտավուն ժայռի վրա: Վորքան ներդաշնակում եյին
մողեսի մարմնի և կապտավուն ժայռի գույներն իրար:
Մողեսի մարմինը բաղմամբ ծալքեր և բշտիկներ ունեւ,
վերոնք հիշեցնում եյին գետնի վրա յեղած անհարթու-
թյունները, բշտիկները: Մողեսը զգալով, վոր մենք մո-
տենում ենք իրեն, նորից վազեց ու մտավ մի քարի
տակ. բայց նա չկարողացավ մարմինը լավ ծածկել, պոչը
դուրսն եր մնացել: Բռնեցի պոչից, սկսեցի դուրս քաշել.
— իզուր աշխատանք, մարմնի բշտիկները քարին եյին
բռնվել ու պահում եյին մողեսին: Մատներս ավելի խորը
տարա, հաջողվեց մողեսի յետևի վոտքերից բռնել, միքիչ
քարը բարձրացրի ու դուրս քաշեցի մողեսին: Բռնեցի:
(Տես նկ. 3):

— Այդ հո կոկորդիլոս է—ասաց Հայկը:

— Վոչ, սա յիւ մողես է, սրան ասում են Ագամա:

Ոգնականներս վախվիսելով մոտեցան, բայց խսկույն
համարձակվեցին ձեռք տալ: Մեկ մոտենում եյին, մեկ
հանկարծ յետ գնում:

Իսկապես անծանոթի համար այս մողեսը կարող է
յերկյուղալի յերևալ: Սովորական մողեսից յերկու անգամ
յերկար ու յերեք անգամ ել լայն եր: Տափակ, յեռան-
կյունաձև բշտիկներով զարդարված մարմնով՝ Ագաման



Նկ. 3. Ագամա

շատ եր նմանվում փոքրիկ կոկորդիլոսին: Մեծ գլուխն ել
տափակ ու յեռանկյունաձև եր: Ատամներն այնքան ուժեղ
եյին, վոր պետք եր զգուշանալ:

Նախ սկսեցինք լավ դիտել մողեսին: Մոխրագույն եր,
մի քիչ կապտախառն—իսկ և իսկ շրջապատի ժայռի գույն:
Հանգիստ դրության ժամանակ նրան կարելի լի հեռ-
վից քարի տեղ ընդունել: Մեջքը մինչև պոչի ծայրը
ծածկված եր շարք-շարք յեռանկյունաձև բշտիկներով: Յե-
թե զգաց թշնամու մոտենալը հեռվից, նա չի վազում շա-
րունակաբար՝ յերբեմն մեկ ել տեսար անշարժացավ, նը-
մանվեց անշարժ քարի, հենց վոր թշնամին մոտենում է,
ելի փախուստի չե դիմում: Նրա այդ սովորութիւնը
փորձով մենք տեսանք: Այն, ինչ վոր փորձեցի Ագամայի
նկատմամբ, մեծ զարմանք ու զվարճութիւն պատճառեց
ոգնականներիս:

Ագաման նստացրի ժայռի վրա, ձեռքի ափով ուն-
քերի ուղղութիւնը սկսեցի մեղմ դիտել:



զաթը. նա հանգստացավ, այլևս փախչելու փորձեր չեւ
անում, մի քանի բույս անց՝ բոլորովին անշարժացավ.
ձեռքերս յետ բաշեցի, մողեսն անշարժ եր. նա ազատ եր
բոլորովին, բայց տեղից չշարժվեց:

Ջնկատեցինք մեզ մոտ կանգնած հովիվներին, վորոնք
զարմանքով դիտում էին մեզ:

Հովիվներից մեկն ասաց մյուսին.

— Վայ սատկեց մողեսը:

Փոքրիկ բնասերներն ել նույն կարծիքին էին. նը-
րանք ել չհասկացան բանն ինչո՞ւն է:

— Սատկեց—հարցրեց Հայկը:

— Վոչ,— պատասխանեցի:

— Բայց ինչո՞ւ չի փախչում. մի քիչ առաջ ինչպե՞ս
աշխատում եր ազատվել ձեռքերիցդ. չլինի՞ թե փասե-
ցիր նրան վորեւ տեղից:

— Վոչ,— ասացի,— մողեսը բոլորովին անմասն է, նա
խորը քնի մեջ է, ավելի ճիշտ, յերկուդից ժամանակա-
վորապես անշարժացել է: Հապա տրորեք մեջքը... նու
սկսիր...:

Յերբ մողեսին սկսեցին այս ու այն կողմից բռթել,
նա անսիջապես զարթնեց, աչքերը բաց արեց, աշխու-
ժացավ, ու այն է, պատրաստվում եր վազել, յես բըռ-
նեցի:

Հովիվները զարմանքով իրար նայեցին: Մեկը մըրթ-
մըրթաց.


— Սա ֆալշի կլինի, ես ի՞նչ բան եր, մեռավ ու
հարուժյուն առավ...:

Յերկրորդ փորձն ավելի ևս զվարճացրեց բոլորին:

Մողեսին կանգնեցրի յերկու լետեի վտռերի վրա,
առջևի վտռերը դրի լուցկու արկղի վրա. մի խոսքով
նրան տվի նստած մարդու դիրք: Նորից բնացրի. ինչպե՞ս
նստացրել էի, այնպես ել միաց անշարժ:

Պատկերն ավելի զվարճալի ու ծիծաղելի դարձավ,

յերբ մողեսի առջևի վտռերի մատների արանքներում մի
կիսածալած թղթի կտոր դրի, իբրև թե «լրագիր ե կար-
դում»: Մնաց անշարժ: Մենք մի քիչ հեռացանք, մողեսը
նույն դրությամբ շարունակում եր «լրագիրը կարդալ»:
Սպասեցինք հինգ-տասը բույս. մողեսը դարձյալ անշարժ
եր, լրագիրն ել ձեռքից բաց չեւ թողնում: Չլինի թե
արդեն սատկել է. յես ել մի բույս այդպես մտածեցի:
Մի քանի անգամ ծափ տվինք և զարթեցրինք նրան. հա-
զիվ սթափվեց և ուզեց փախչել, յես բռնեցի:



Նկ. 4. Ազամային՝ փայտերի միջոցով քայլող ծերուկի գիրքը ե վաճ
և այդպես բնացրած:

Այնուհետև բռնեցինք նման մի քանի մողեսներ:

Ոգնականներս այլևս չէին վախենում նրանից. վա-
խենալու կարիք ել չէար, քանի վոր անմեղ արարածներ
են: Ճիշտ է, մեծ են, արտաքուստ ահարկու, շնորհիվ
բազմաթիվ բշտիկների, ունեւին և ուժեղ առամներ, բայց
անմեղ կենդանիներ էլն. ինչպե՞ս և բոլոր մողեսները,
սրանք փաստաւար չեն, ընդհակառակը նրանք միջատնե-
րին վոչնչացնելով միաժամանակ դրանով ոգնում են մար-
դուն: Ազաման ել թշնամիներ ունի. նրան հետապնդում

են գիշատիչ թռչունները: Ահա պաշտպանության համար
ե, վոր Ագաման յերբեմն աշնպես ե անշարժանում, վոր
նմանվում ե մեռածի: Հենց վոր զգում ե թշնամու մոտ-
կությունը, յեթե հնարավորություն չունի թագնավելու
քարակույտերի մեջ, իսկույն անշարժանում ե. թշնամին
կամ նրան քարի տեղ ե ընդունում, կամ ել տեսնելով,
վոր «մեռած» ե, հանգիստ ե թողնում ու հեռանում: Յեզ
այդպիսով Ագաման փրկվում ե փորձանքից:

Մեզ մոտ Ագաման չերկար ապրեց: Յերկու ամիս
բան չեր ուտում, չեր ընտելացել մեզ. ապա սկսեց ու-
տել միջատներ, ճանճեր. աշխուժացավ, և աջքան ընտե-
լացավ նա իր նոր բնակարանին, վոր բաց արկղից այլևս
չեր փախչում: Մեր տնեցիներին զարմացրեց այն, վոր
նա յերկու ամիս վոչինչ չկերավ և դիմացավ սովի: Բայց
զարմանալու կարիք չկար. բոլոր սողուններն էլ այդ հատ-
կությունն ունեն, որինակ, կրիան հինգ ամսի չափ ա-
ռանց սնունդի ապրեց մեզ մոտ. ինչ վոր տալիս էինք,
չեր ուտում^{*)}: Նույնքան ապրեց և լորտուն (անթույն ոճ)
սա լել հրաժարվում եր կերակրից:

Տեսնում եք, վորքան հետաքրքրական մոդեսներ կան
նույնիսկ մերի, բուսականությունից զուրկ վայրերում:
Յես Ագամային հանդիպել էյի առաջին անգամ Բագվի
շրջակայքում. այնուհետև պատահեցի նրան Տփլիսի շուր-
ջը, մանավանդ Կոշորի ճանապարհին, տեսա և Յերևանի
քարքարոտ բարձունքներում:

Դիտածս մոդեսներից Ագաման ամենահետաքրքրա-
կան ու զվարճալիս ե:

4. ԴԵՂՆԱՓՈՐԻԿ (ոճամոդես)

Պատշգամբում նստած կարդում էյի: Կարդում էյի
կենդանիների մասին. չորս փոքրիկ բնասերները լուռ ու

^{*)} Կրիաները յերբեմն մինչև մեկ տարի կարող են առանց
սնունդ ապրել:

մունջ նստած՝ լսում էյին, յերբեմն տխրում էյին ու
«ախ» քաշում, յերբ կենդանին վտանգի մեջ եր լինում,
ուրախանում—յերբ վտանգից ազատվում եր:

Հանկարծ հարևան սենյակից մի անսովոր աղմուկ
լսվեց: Գիրքս մի կողմ դրի: Նայեցինք իրար: Ի՞նչ ե պա-
տահել: Ուժգին բախեցին սենյակի դուռը, ապա բացվեց
և հանկարծ պատշգամբ դուրս թափվեցին աղախներ,
քույրս և նրա ընկերուհին... և յերեքն ել սարսափած
կանչում էին...:

— Ո՛ձ, ո՛ձ, թունավոր ոձ, շուտ, շուտ հասիր...:

— Վորտեղ, ի՞նչ ոձ, ո՞վ ասաց—զարմացած հարցրի:

— Այ, գնա տես, դրսի դռան առաջն ե... չի թող-
նում, վոր հարևան ինժինները տուն մտնի...:


— Մեզ մոտ թունավոր ոձ չկա, այդ ի՞նչ բաներ եք
հնարում...:

Ել չապասեցինք. արդեն աղմուկը լսվում եր փողո-
ցից: Հարևան ինժինների կինն ել միացել եր աղմկաբար-
ներին: Հանկարծ հիշեցի, վոր նախասենյակում իմ կեն-
դանանոցն եր, ուր արկղների, բանկաների մեջ ապրում
էին տարբեր տեսակի թաղաղ ու անվնաս կենդանիներ.
չլինի՞ թե բոլորն ել փախել են ու վազվզում են սենյակ-
ներում: Բայց մեզ մոտ ոձ չկար, այն ել թունավոր...
շտապեցինք դեպքի վայրը: Նա մեր և հարևան ինժինների
համար մի փոքրիկ ընդհանուր նախասենյակ եր, վորտե-
ղից հինգ աստիճաններով պետք ե իջնելինք փողոց դուրս
գալու համար. իսկ փողոցի դուռն արդեն բացված եր...:
Փողոցում բազմություն եր հավաքվել, բոլորի առջև
կանգնած եր մեր հարևան ինժինները... ձեռքերով ինչ
վոր շարժումներ եր անում և կանչում—թունավոր ոձ,
թունավոր ոձ, հեռու կանգնե՛ք... Թո՛ղեք հանգիստ հեռա-
նա... —լսվում եր վախեցած, հուզված ինժինների ձայնը:

Առաջին պահ, իսկապես կարծես լես ել վախեցա-
բայց լավ գիտեյի, վոր մեր կողմերում, այն ել քաղա-

բում թունավոր ոձ չկա ու չի լինում: Նախ քան փողոց դուրս գալս և «թունավոր ոձին» տեսնելս, շտապեցի կենդանիներին սենյակը, ստուգեցի արկղներից մեկը, տեսա խուփը բացված, մի կողմ ընկած... հասկացա բանը ինչու՞ն է... Ել ժամանակ չեղավ փոքրիկ ոգնականներիցս հարցնելու, թե ինչո՞ւ յեր խուփը բաց... ոգնականներս անհետացել էլին...: Հարկավոր եր շտապել: Թե ոձը կարող է մարդկանց թունավորել, այդ մասին ամենին հոգ չեյի տանում, իմ միակ մտածմունքս եր վորքան կարելի յե շուտ փրկել կենդանու կյանքը, յեթե վրա չհասնեմ, կքարկոծեն ու կսպանեն նրան:

Շտապեցի փողոց. նախասենյակի դռնից մինչև փողոց հասնելը աստիճաններ կային, հազիվ դուրս չեկա,



Նկ. 5. Դեղնափորիկ

տեսնեմ հենց ուղիղ դռան շեմքին վոլորված նստած եր այն կենդանին, վորին թունավոր ոձի տեղ եյին ընդունել. դա վոտներ չունեցող ոձանման մողեսն եր, վորը հանգիստ նստած տաքանում եր արևի ճառագայթների տակ. իսկի չեր ել մտածում իր գլխին հավաքված ահագին բազմության մասին: Թունավորելու մասին ել խոսք չեր կարող լինել, քանի վոր թույն չուներ:

Հանդիսատեսները լռեցին. լարված ուշադրությամբ դիտում եյին, թե ի՞նչ պիտի անեմ: Յես հանգիստ մոտեցա, ձեռքս վերցրի ոձանման յերկար մողեսը և «սա մողեսն է, ոձ չի» ասելով՝ ձեռքս ուղղեցի դեպի շվարած ամբոխը: Պիտի տեսնելիք, թե ինչպե՞ս սարսափած ու գոռում գոչյունով փախան բոլորը... սակայն ինժիններն ամենից առաջ վազեց և պաշտպանողական դիրք ընդունելով՝ ձեռքերը պարզել եր և նախազգուշացնում եր ինձ ասելով. «չես լավ գիտեմ, վոր դա թունավոր ոձ է...»:

Բայց յես անվրդով շարունակում եյի հանգստացնել նրան.

— Ավելի մոտ յեկեք և լավ դիտեցեք, սա ոձ չի, մի վախենաք. թեև վոտներ չունի, բայց հասկացեք, վոր սա մողեսն է... յես լավ գիտեմ, քանի վոր հենց իմ սենյակիցն է փախել...:

— Չե, չե, անկարելի բան է, առանց վոտքերի մողես կլինի...:

— Այո կլինի,—պնդեցի յես ու ավելի համոզելու համար, վոր իմ մողեսը բոլորովին անվտանգ է, փաթաթեցի նրան վզովս... բոլորն այդ տեսնելով՝ այնպես սարսափեցին, վոր կարծես թե մողեսը նրանց վզովն եյի փաթաթել:

— Չեք հավատում—դիմեցի ինժիններին. յես այդ լուպեյին մտածում եյի, թե ինչպե՞ս համոզեմ, վոր չվախենա մողեսից: Մողեսի գլուխը քսեցի յերեսին... յեմ ասի.—յեկեք մոտ, միք քաշվի, ձեռք տվեք, կտեսնեք, վոր սա շատ անմեղ կենդանի յե...:

— Լավ, ինչպե՞ս իմանանք, թե դա մողեսն է, չե՞ վոր վոտքեր չունի—հարցրեց ինժինները և մի քիչ սիրտ առնելով մոտեցավ ինձ:

— Դուք չգիտեք, բայց յես իբրև բնագետ կրկնում եմ, վոր կան նաև առանց վոտքերի մողեսներ, վորոնք շատ նման են ոձերի. բայց բավական է իմանալ մի բա-

նի բնորոշ հատկանիշներ նրանց մասին, այլևս դժվար չի լինի ոձը տարբերել ոձամողեսից: Նախ վերցնենք աչքերը, ոձերը կոպեր չունեն, նրանց աչքերը միշտ բաց են, իսկ մողեսները կարող են աչքերը կոպերով ծածկել: Նաչեցեք, տեսնում եք, սա յեւ կոպեր ունի...: Մողեսի գլուխը լայնութիւնով համարյա մարմնի շարունակութիւնն է, նեղ վիզը չի նկատվում, ինչպես ոձի վրա...:

Ինժինները դարձյալ չեն համոզվում. նա միայն հավատաց, վոր կենդանին թունավոր չէ, քանի վոր ինձ չը կծեց և յես ել չմեռա...: Ինժինների կինն անհանգիստ սենյակից շարունակ կանչում եր ամուսնուն:

— Լավ, լավ, գալիս եմ... մի վախենա, թունավոր չի—ասաց ինժինները ու համարձակ բարձրացավ վերև:

— Տարօրինակ բան, եսպես ել մողես կլինի—ինքն իրեն բացազանչեց ինժինները:

Յերը սենյակ վերադարձա, ոգնականներս չկային. կանչեցի, պատասխան չեղավ: Գնացի դեպի սեղանատուն: Այստեղ ել վոչ վոր չեր յերևում, բայց զգացի ինչ վոր շշուկ. տեսա յերկու փոքրիկ բնասերներին կուշ յեկած՝ սեղանի տակ: Յես հասկացա այժմ բանն ինչու՞ն եր...:

— Դե լավ, լավ, դուրս յեկեք—ասացի հանգիստ ու մեզմ ձայնով—հանցանք գործեցիք, բայց ամեն ինչ լավ անցավ... ուրիշ անգամ խնդրում եմ առանց հարցնելու այլևս արկղները բաց չանեք...:

Ոգնականներս սիրտ առած, այժմ առանց քաշվելու իրար յետևից դուրս յեկան սեղանի տակից, նրանցից մեկն սկսեց արդարանալ:

— Մենք խուփը շատ բաց չարինք, միայն մի քիչ քաշեցինք, վոր նայենք ու ելի ծածկենք, բայց մողեսը հանկարծ գլուխը դուրս ցցեց, խուփն ընկավ, մենք վախեցանք և փախանք...: Դուան տակ մի մեծ ճեղք կար, հավանական է հենց այդ ճեղքով ել դուրս եր յեկել...:

Յեթե մենք ել լավ համոզված լինեյինք, վոր նա մողես է, իհարկե նորից կբռնեյինք...:

Ինչ ասեյի: Այդ մողեսը մի որ առաջ մեկից ընծա եյի ստացել և ոգնականներս դեռ ծանոթ չեյին նրա հետ: Յերեքով միասին դնացինք մեր «գազանանոցը»: Սկսեցինք լավ դիտել մողեսը և ուսումնասիրել. ձեռքից ձեռք տալով՝ նայում եյինք նրա բոլոր մասերը: Մողեսը կծել չեր փորձում, միայն մի անգամ, յերևի յերկուդից, հետույքից դուրս թափեց անդուրեկան մի հեղուկ... շորով սրբեցի, ելի ձեռքս առա:

— Ո՞վ կասի ձեզնից, ինչո՞ւ նա դուրս թափեց այս հեղուկը...:

— Իհարկե վախենալուց—ասաց մեկը:

— Իսկ յես կարծում եմ, վոր այդ հեղուկով նա սովորաբար պաշտպանվում ե—պատասխանեց մյուսը—հեղուկի անդուրեկան հոտն անպայման կարող է փախցնել թշնամիներին...:

Դիտողութունը ճիշտ եր: Շատ կենդանիներ անդուրեկան հեղուկներ արտադրելով՝ վորոշ չափով պաշտպանվում, ազատվում եյին թշնամիներից:

Մեր մողեսն իսկապես ոձի նման եր. յերկարութիւնն էր կլինեք մինչև մեկ արշին. մարմինը կոշտ, կաշվի նրման և ծածկված թեփուկներով. մարմինը կողքերից մի քիչ ներս եր ընկած, վիզը չեր նկատվում, նրա մարմինն աննկատելի կերպով սիանում եր գլխի հետ: Տեսանք նրա կոպերը, մողեսը յերբեմն ծածկում եր իր աչքերը, այս չափազանց բնորոշ հատկանիշ եր և այդ պատճառով յերբեք չեր կարելի նրան ոձի նամանեցնել: Բաց արինք բերանը, ուներ լեզու, ուներ և ատամներ, բայց ատամներն այնքան ել կարծր և մեծ չեյին: Գլուխը համարյա քառակուսի յեր, դունչը դուրս ընկած: Նա բռնված եր մեր քաղաքի շրջակա ամալի դաշտերից: Նրա մարմինը հողի գույն ուներ—դեղին-կարմրավուն, իսկ փորն ավելի

մուգ գույնի յեր: Իգուր չեն ուռաները դրան ղեղնափորիկ ասում: Մենք ել անվանենք նրան ոճամողես կամ ղեղնափորիկ:

Գրեցինք սեղանի վրա. հանգիստ չեր մնում տեղում. շատ շարժուն եր, կծկվում, վոլորվում եր, այս ու այն կողմ սողում: Գլխի յերկու կողմերում յերևում ելին փոքրիկ յերկարաձիգ ճեղքեր—դրանք նրա ականջներն ելին: Դեղնափորիկը ձայնից խուսափում եր, ինչպես յերևում ե վատ չեր նրա լսելիքը...: Վոչ մի անգամ չփորձեց մեզ կծել, սակայն միշտ աշխատում եր ազատվել մեր ձեռքից. իր պաշտպանության համար յերբեք չդիմեց ատամների ոգնությանը:

Որեր անցան: Մտերմացանք դեղնափորիկի հետ, նույնիսկ իր հեզ ու հնազանդ բնավորության համար սիրեցինք նրան և նա յել փոխադարձաբար վարժվեց մեզ ափնքան, վոր այլևս չեր խուսափում սեզանից: Կատարյալ ազատության մեջ եր, անարգել «ման եր գալիս» բռնոր սենյակներում. մեր հոգսերը մի քիչ կրճատվեցին, վորովհետև մողեսն ինքն եր իր սնունդը ձարում: Պիտի տեսնելիք, թե ինչպես նա հետազոտում եր ամեն ծակ ու ծուկ... մի բան ել մեզ շատ ուրախացրեց. մեր տանը մինչև մողեսի հայտնվելը բավականաչափ տարականներ կային, վորոնք իրենց անտեղի այցելությամբ մեզ շարունակ անհանգստացնում ելին: Դեղնափորիկն սկսեց նրանց վոչնչացնել: Նա, ինչպես և բոլոր մողեսները, սիրում եր արջուկներ. լավ վոչնչացնում, ուտում եր տարականներին. այդ եր պատճառը, վոր դրանից հետո ձանձրալի և պարագիտ միջատների այցելությունները կտրվեցին, այլևս չեկին յերևում: Մողեսը նրանց հանգիստ չեր թողնում:

Մեկ անգամ ականատես յեղանք, թե ինչպես նա մուկ վորսաց:

Մեր ննջարանում, չգիտենք վճրտեղից, յերբեմն մի

մուկ գիշերները շարունակ խանգարում եր մեր հանգիստը: Մողեսին գիշերները պահում ելինք սենյակում: Մի անգամ, կես գիշերին մեզ զարթեցրեց մկան աղիողորմ ծվծվոցը: Զրազը վառեցինք: Մուկը դեռ ծվծվում եր: Գտանք նրան դեղնափորիկի բերանում: Բայց այդ ի՞նչ եր: Դեղնափորիկը նրան չլափեց իսկույն, կուլ չտվեց վողջվողջ, ինչպես ոճերն են անում: Մուկը յետևի վտառներից եր բռնվել. փորձում եր ազատվել մողեսի ատամներից, բայց ի՞նչու: Հանկարծ մողեսն սկսեց գլուխը շարժել և մկանն սկսեց պտտանել, հա պտտցնել... մեր հետաքրքրությունը լարվեց, մոռացանք բունը և անհամբեր դիտում ելինք, թե այդ ի՞նչ եր անում մողեսը...: Մկան բավական պտտցնելուց հետո, յերբ հանգիստ առավ, մուկըն արդեն թուլացած եր. յերկարատև պտտցներից նա շլժածի նման եր: Յիվ հենց այդ ել հարկավոր եր մողեսին: Նա սկսեց ուշքը կորցրած մկանն անուշ անել. կարծրը ատամներով նախ գլուխը ջախջախեց, ապա սկսեց փայելել մկան թարմ միսը:

Այդպես ուրեմն, մի ոգտակար բան ել իմացանք. գոնե այդ դեպքից հետո, այլևս մկները մեզ չեկին անհանգստացնում:

Թեև մողեսն իր համար արդեն սնունդ եր գտնում, բայց մենք չեկինք մոռանում նորից կերակրելու նրան. տալիս ելինք միջատներ, նույնիսկ խսունջներ, փափկամորթ կենդանիներ, վորոնց նա ուտում եր հենց կարծր թեցիով:

Ինչպես յերևում ե, դեղնափորիկը թեև մողես եր, բայց այնքան ել չեր սիրում իր ցեղակիցներին, սովորական մողեսներին: Յես այդ լավ չգիտելի և սխալմամբ նրա արկղում դրել ելի մի սովորական մողես: Սկզբում կարծես նրանք հաշտ ելին իրար հետ, բայց մեկ ել տեսնեմ, դեղնափորիկը վրա հասավ իր յեղբայրակցին, պոկեց նրա պոչն ու կերավ: Սովորական մողեսը, թեև պոչից չրկվեց, բայց մնաց անվնաս. դեղնափորիկը մողեսին չլափեց, նորից յերկու անգամ փորձ արել նոր նոր մողեսներ

զցելու նրա մոտ. դեղնափորիկը պոկում էր մողեսների պոչերը, ուտում, իսկ կենդանիներին թողնում էր հանգիստ: Յերևի ասենից շատ դուր էր գալիս և համեղ պատառ էր նրա համար մողեսների պոչը:

Մի բան գիտե՛լի դեղնափորիկի մասին. զրքերումն էլի կարգացել. ուղեցի ստուգել: Մեր քաղաքում ապրում էր իմ ծանոթ բնասերներից մեկը. նա շատ էր սիրում սողուններ, մանավանդ ոճեր: Ապակեծածկ տերրարիումում պահում էր նույնիսկ թունավոր ոճեր: Գնացի նրա մոտ. ցույց տվի դեղնափորիկը: Ծանոթս ուրախացավ և միտքս հասկանալով՝ հատուկ միջնորդով տերրատիումի մեջ առանձնացրեց թունավոր ոճերից մեկին: Դեղնափորիկին զցեցինք թունավոր ոճի վրա: Սկսվեց լերկուտաբեր կենդանիների միջև մահվան կռիվ: Շատ զարմացա, տեսնելով, թե ինչպես անվախ դեղնափորիկը հարձակվեց իժի վրա. թունավոր ոճն աշխատում էր մողեսին խաթել. դեղնափորիկի մարմինը կոշտ էր, նա ավելի ուժեղ մկաններ ուներ. հարձակվում էր և ծանր գլխով խրփում ոճին ու փորձում իր ատամներով բռնել նրան. մեզ թվաց, թե ոճն արդեն նույնիսկ խայթել է նրան մի քանի անգամ, բայց մողեսը չէր թուլանում. հանկարծ մի ակնթարթում մողեսն իժի վրա ընկավ, բռնեց նրա գլուխըն ու կարծր և ուժեղ ծնոտներով ջախջախեց գլուխը:

Այժմ չես համոզվեցի, թե վորքան ոգտակար կենդանի չե դեղնափորիկը, թե վորքան կատաղի, անհաշտ թշնամի չե թունավոր ոճի համար և վորքան հանգիստ, հեզ ու հնազանդ է մարդու առաջ:

Վոչնչացնելով վնասակար միջատներին, նույնիսկ թունավոր ոճերին՝ նա միաժամանակ մեծ չափով ոգնում է մարդկանց:

Ուրեմն ախուհետև դեղնափորիկ հանդիպելիս՝ ել չկարծենք, թե նա ոճ է, մանավանդ թունավոր ոճ, և իզուր տեղից չբարկոծենք, չսպանենք նրան, վորովհետև նրանք մեր տնտեսության պահպաններն են:



<< Ազգային գրադարան



NL0268695

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Անագիդական սերիայի» հետեվյալ գրքերը.

1. Ռ. Գաբրիելյան, Մաջատակեր բուսեր
1926 թ. հջ 26 15 կ.
2. Ի. Կ. Լեբեգով—Ինչպես ե առաջացել լերկիրը
և քանի տարեկան ե նա, 1926 թ. հջ 35 30 կ.
3. Ռ. Գաբրիելյան—Ճագարամուկը, բղեղների յետևից
1927 թ. հջ 18 25 կ.
4. Ռ. Գաբրիելյան—Ովկիանի թագավորը
1926 թ. հջ 26 20 կ.

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

5. Կարինցեվ—Երկտրոֆիկացիայի պիոներ-եղիսոն:
6. Փե. Ֆելաչի—Կենդանական և բուսական աշխարհների փոխ-
հարաբերությունների մասին:
7. ——————Ջարմանալի զենքեր:

14.952